



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ**  
**Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, 7 Մարտը Մեծ Պահոց 4-րդ Կիրակին է, որ կը կոչուի՝ Տնտեսի Կիրակի:  
Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT**  
**HOLY CROSS CATHEDRAL**

Sunday, March 7<sup>th</sup>, 2010, is the fourth Sunday of Great Lent, the Sunday of the Steward.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Cross in Montebello and will deliver the sermon.

\*\*\*

**ԶԱՄԱՆՔԻ Ի ՆՊԱՍՏ ՀՕՄ-Ի ԱՄԱՆԴԱԿԱՆ ՆԱԲԱՊՏՈՅՏԸ**

ՀՕՄ-ի Ջաւախք Հիմնադրամի յանձնախումբին կազմակերպած ընթրիք-երեկոն տեղի պիտի ունենայ Կիրակի, 7 Մարտին, «Electra Crystal» նաւուն վրայ, Newport Beach: Ձեռնարկի պատուոյ հիւրն է ծանօթ բարերար՝ Տիար Յակոբ Պաղտասարեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի ընդառաջէ իրեն տրուած հրաւերին:

**A.R.S. JAVAKHK FUND COMMITTEE**  
**5<sup>TH</sup> ANNUAL GALA DINNER**

On Sunday, March 7<sup>th</sup>, 2010, the 5<sup>th</sup> annual gala dinner of the A.R.S. Javahk Fund Committee will take place aboard the Electra “Crystal” Yacht in Newport Beach. This year’s honored guest is community benefactor Mr. Hacop Baghdasarian.

The Prelate will convey his blessings and express his support on this occasion.

\*\*\*

## **ՀԱՅՐԵՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԱՐԾՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Նախաձեռնությամբ եւ հրաւերով Յ.Յ.Դ. Կ.Կ.Ի Հանրային Կապի Յանձնախումբին, Շաբաթ, 6 Մարտի առաւօտեան, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ նախաճաշ-հանդիպումի մը, «Ֆենիշիա» ճաշարանին մէջ, Կլենտէյլ:

Հանդիպումին ներկայ պիտի ըլլայ Հայաստանի Ազգ. Ժողովի պատգամաւոր, ֆինանսավարկային եւ պիւտժեական հարցերու մշտական յանձնախումբի փոխ-նախագահ՝ Արծուիկ Մինասեան, որ լայն տեղեկութիւններ պիտի փոխանցէ Հայաստանի տնտեսական վիճակին մասին ընդհանրապէս եւ ներկաներու հարցումներուն պատասխանելով՝ բացատրութիւններ պիտի տայ արծարծուած հարցերուն:

Հանդիպումին ներկայ պիտի ըլլայ նաեւ միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, մամուլը եւ մտաւորական դէմքեր:

## **PRELATE TO ATTEND MEETING WITH ARMENIAN MP ARTSVIK MINASSIAN**

On the morning of Saturday, March 6<sup>th</sup>, 2010, the Prelate will participate in a breakfast meeting organized by the Public Relations Committee of the ARF Central Committee with guest of honor Artsvik Minassian, member of Armenia’s National Assembly and deputy chair of the standing committee on financial-credit and budgetary affairs.

MP Minasyan will report on the economic situation in Armenia and will have a discussion with community leaders and members on this matter.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՂՕԹՔԻ ՕՐՈՒԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ**

Ուրբաթ, 5 Մարտը Կանանց Համաշխարհային Աղօթքի Օրն էր. այս առիթով, առաւօտեան հաւաքական աղօթքի յատուկ արարողութիւն տեղի

ունեցաւ Քահուենկայի Միացեալ Հայ Ժողովական Եկեղեցւոյ մէջ, Լոս Անճելըս, «Ամէն շունչ ունեցող թող Տերը օրհնէ» բնաբանով:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ էր պաշտամունքին, կատարեց փակման աղօթքն ու փոխանցեց իր օրհնութիւնը:

Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւները՝ Արժ. Տ. Նարեկ Զինյ. Փեղիվանեան ու Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան եւ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

## WOMEN'S WORLD DAY OF PRAYER



On Friday, March 5<sup>th</sup>, 2010, women around the world observe Women's World Day of Prayer. Our local community also participates in this global movement, organizing an event each year on this day to bring together the faithful women of our community for prayer, fellowship, and praise.

This year's prayer service was held at United Armenian Congregational Church with the theme "Let everything that has breath praise God". The Prelate attended and delivered the benediction and his blessings.

The Prelate was accompanied by Rev. Fr. Nareg Pehlivanian, Rev. Fr. Razmig Khatchadourian, and Rev. Fr. Ashod Kambourian.

\*\*\*